Ես կէրթամ կռիւ, կը ծարվեմ, տիւք կարօտ մնացէք.
Ծովասարու պաղ պաղ քեամիքն էլ, մնացէք բարով, բարով մնացէք
Ես կէրթամ կռիւ, կշոգանամ, տիւք խով մնացէք»։

«Երկինքը ծով ծիրանին[1]» երգն է կարծես հնչում այս տողերում։ Սակայն շարունակենք։

§ 85. «Ասաց ու քշեց գնաց խեծլի դիմաց. տեսաւ որ երկնուց աստղին խիսապ կէր, ինոնց վրանին հիսապ չկէր։ Էնտեղ իջաւ նստաւ, մէղեց վեր ուր հալին։ Դարթլանմիշ եղաւ, ասեց.

«Օրհնեալ բարերար Աստուած, խնամք շատ էր մեծ թագաւորուն.
Ես էլնեմ գեարնան գէլ, ինոնք էլնեն գեարնան գեառ, չեմ կանայ արնոտե.
Ինոնք էլնեն բամբակ, ես էլնեմ կրակ, չեմ կանայ մշախարե.
Ինոնք էլնեն փուշն փալախ, չոր ցախ, ես էլնեմ բոց ու կրակ, չեմ կանայ վառե.
Ինոնք էլնեն կրակ, ես էլնեմ գեարնան գեառ, չեմ կանայ ընցուցե»։

Հայ ժողովրդի ստեղծագործ ոգին է արտադրում այս հրաշալի բանաստեղծական հատուածները, որ հոմերական կարող են համարուել։

Քաջանց անունը միայն այս փոփոխակումն է գտնուում, որ ինչպէս յաճախ կրկնեցինք Արշակունեաց տունն է, որ շատ այլ կողմնակի տպաւորոյթներով ևս հաստատուում է։ Անշուշտ այս մի ժողովրդական կոչումն է, ինչպէս ցարդ մեր ժողովրդի մէջ շատ, այսպէս ասենք, պաշտօնական ազգանուններն որ և է մականու-

---

1. Այսպէս է յիշուում «Երկնէր երկին» Վահագնի ծննդեան երգը մի ժողովրդական «Պառաւի աղօթք» երգում (Գարեգին սարկ. Փշրանքներ ժողովրդական Բանահիւսութիւնից, էջ 77—78, Թիֆլիս 1892)։ Կարելի է ենթադրել, որ ոչ թէ երգն է, այլ հեթանոս Հայոց աստուածներն են, որոնց օգնութեան է դիմում պառաւը, ինչպէս որ մի տող վերեւ յիշուում է «Հաւատով Տէր կենդանին» եւ ներքեւ «Կուս Մարիամ» եւն։ Բայց քանի որ վերջը «պահապան» է կանչում եւ «Քսան ու չորս տուն ներսէսին», այսինքն Ներսէս Շնորհալու քսան ու չորս տուն «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը օրուայ քսան ու չորս ժամերի համար, ուստի կարելի է կարծել, որ երկինք ու ծովը ոչ միայն իբրեւ աստուածներ օգնութեան են կանչուում, այլ «Երկն-էր-երգին» երգը, ինչպէս եւ ժողովրդական «Լուսացաւ, լուսն ի բարին»-ը, իբրեւ աղօթք է յիշուում։